




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Դարբինյան Կ.

145

Շարժ ու

ԿՈՂԵՐՈՍ

Դարբինյան
205

Թ. 1925

8 2004

Հայաստանի Կոմկուլե

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

24/VI 26/VI

ՅԱՐՆ

ՈՒ

ՄՈՒՐԱԸԸ

ՄԵԼԵԿԱՆ ԶԵՐԵԼԹ

891.9925

5452

7-28

205

ԻՐ

Խաչատուրի (Ավդալբեգյան)

ԵԴԻԿԻՆ ՈՒ ՍՈՒՐԻԿԻՆ

ԶԵՐՄ ՍԻՐՈՎ ՆՎԻՐՈՒՄ Ե

ՀԵՂԻՆԱԿԸ


(39271)



ՅԱՐՆ ՈՒ ՄՈՒՐՁԸ

ՀԵՐՅԱԹ

I



Կար — չկար
Մի Յար —
Այլ անդակ հրեշ,
Անճոռնի ու զեշ.

Աչքերը՝ ծուռ — ծուռ,
Բերանը՝ մեծ դուռ.

205-2044
19 204

Ատամներ ունեն — մինը գազ ու կես,
 Բիթը՝ կախ ընկած — խոզի զնչի պես.
 Ձեռ ու վոտ ունեն — կաղնի ծառի ճյուղ,
 Փորն ենքան մեծ եր — կուլ կըտար մի գյուղ:
 Ես հրեշ — Յարը մարդիկ եր ուտում.
 Ենքան անկշտում, ենքան անկշտում՝
 Թե մի նստելում հարյուր մարդ կուլ տար --
 «Վայ սոված մեռա» — նա հարայ կըտար:
 Ունեն
 Ծառաներ —



Կոմս, Իշխան, Աղա,
 Բեգ, Ժանդարմ, Բյոխվա,
 Պրիստավ ու Տերտեր,
 Յեվ սրանց հետ ել — Թալանի վարպետ՝
 Տասնյակ հազարով — Մոլլա, Վարդապետ:

II

Ծառաները — հրեշ դառած,
 Խաչ ու գեներ վրեն առած,
 Ցրված — փռված աշխարհով մին՝
 Ընկան մարդկանց մսի համին:

«Ինչ կար — չկար՝
 Յարի համար...»



Ասին, առան,
 Թալանեցին, տարան, տարան,
 Վորը ավին հրեշ — Յարին,
 Վորն ել իրենք Թաքուն կերան:
 Ինչ վոր ասոված հնարեցին,
 Նրա համար ժամ շինեցին.
 Յար — հրեշն ել — նրա վորդի,
 Վոր ամեն մի աղամորդի —



Սրանց համար աղոթք անի,
 Ինչ վոր ունի՝ նրանց տանի:

Տերտերները ճառեր ասին,
Աստծու, նրա փառքի մասին —
թե՛

«Ով սոված. տկլոր կենա,
Իսկույն աստծու գոգը կերթա»...
— Դրախտի ճամբեն—փորն ե Յարի.
Թող ձեզ կուլ տա, ձեզ չարչարի,
Չըղձգոհեք, չբողոքեք.
Որ ու գիշեր աղոթք արեք,
Վոր Յարն ապրի ու ձեզ կուլ տա,
Արքայության ճամբեն ցույց տա...



«Ալելուա, հիշյա մեզ տեր,
Աստված պահի ժամ ու տերտեր»...

Աստվածն—աստված՝ կասես քիչ եր:

Մեյդան բերին ինչեր, ինչե՛ր...
Սուրբ, առաքյալ ու նահատակ,
Մատուռ, վանքեր բաղմաքանակ.
Պատարագ ու մատաղ մորթել,

Պսակ, կնունք, քելեխ ուտել.
Հաղար ու մի որենք ծեսեր,
Մարդանց կյանքը՝
Ա՛յ, եսպես եր...

III

ՄՈՒՐՔ անունով — Յարի յերկրում,
Մի շատ համեստ մարդ եր ապրում:
Տեսքով—նիհար, գործով—ուժեղ,
Նրա համար թե հրեշը—թե մի մժեղ:
Գործն ել ի՛նչ եր... Յերկաթ թակել,
Նիզը ձեռին—քարեր ծակել:
Թե բարկանար. .
Ե՛նքան կրտսր, ենքան կրտսր,
Վոր կրփշրեր յերկաթ ու քար:
Մեր Մուճն եսպես իրեն գործին,
Բահ եր շինում, թե մի կացին,
Ժանդարմն եկավ, թե՛
«Համեցեք,



Յար—հրեշի մոտ գնացեք—
Վոր քեզ ուտի՝
— Վճնց թե ուտի...
Խե՛նթ ես, ի՛նչ ե...

— Խենթ եմ, թե չե՛
 Քո բանը չե՛.
 Հայդե, վեր կաց. թե շատ խոսես՝
 Ենպես կըտամ վոր կըսասկես...


— Հալա ռեխին, ռեխին մտիկ.
 Ձենդ կտրի, հոտած շան տիկ.
 Վեր կաց կորի, թե չե՛ հրես—
 Ենպես կըտամ, կըմոլորես...
 Հարամ,
 Ժանդարմ...

— Դու որենքին դեմ ես գնում...
 Լավ. հիմի տես, ինչ եմ անում:
 Ասեց ժանդարմն ու պինդ բռնեց, թե վոր կապի՝
 Տեղն ու տեղը— Մուրճին լափի:

Մուրճը իրեն մի թափ տվեց,
 Գնաց, եկավ ու մի զարկով ինչպես ծեփեց,
 Վոր ժանդարմը թավալգլոր—
 Փռվեց գետին— արնակոլով...

— Դե, գնա ու հիմի լափի—
 Անմեղ մարդկանց արյունն թափի:
 Ա՛յ, ինչ ասեմ, յես ձեր ցեղին,
 Ձեր աշխարհին, ծնված տեղին...
 Ի՞նչ եք գազան հրեշ— Յարով—
 Սոված շներ— տաս հազարով—
 Ընկել անմեղ մարդկանց ջանին,
 Ու չեք թողում իրենց բանին:
 Վկա լինի ես իմ Ձնդան,
 Վոր ձեր ցեղից քանիսը գան՝
 Ենպես զարկեմ, վոր ձեր ձենից—
 Յարի թախտն ել ժափ գա տեղից...

.



IV

Խաբար արին,
 Հրեշ— Յարին—
 Բա չես ասիլ եսպես մի տեղ,
 Մեր ժանդարմին, խեղճ ու անմեղ—
 Մուրճն սպանեց, ասելով թե՛
 Յարը— խենթ ե,
 Հիմար, ապուշ,
 Թույլ ու անուժ...
 Թող գա, տեսնեմ ինձ ի՞նչ կանի,
 Սե—գրողը նրան տանի...
 Յարը փնչաց,
 Ու մռնչաց.—
 — Դե, գնացեք, կապեք, բերեք,
 Ինչ Մուրճ տեսնեք, բռնեք, կերեք,
 Ու ջնջեցեք նրա ցեղը,
 Մոխիր շինեք տուն ու տեղը:

.

Ճամբա ընկան,
 Կոմս ու Իշխան,
 Հազար ժանդարմ, Բեգ ու Պրիստավ,
 Ամեն մինը—մի գենք առավ.
 Գոռում—գոչում, աղաղակով,
 Կոտորելով, տուր ու թակով՝
 Հասան ենտեղ,
 Ուր ապրում էր մեր Մուրճն անմեղ:
 Ու գիշերով թաքուն, կամաց,
 Յերբ մեր Մուրճը հանգիստ պառկած—
 Մրափում էր,
 Խումփում էր,
 Հրեշները շուրջ պատեցին,
 Քնած աեղը—պինդ կապեցին:

— Ա՛խ, դու շղթա, լիրբ անամոթ,
 Նրա համար քեզ կռեցի,
 Վոր դու կապես իմ ձեռ ու վրա...:
 Քեզ շինեցի—
 Վոր ծառայես իմ դրացուն,
 Խեղճ գյուղացուն,
 Թե՞ դաս սրանց ծառա մտնես:
 Ա՛յ, դավաճան, դու սևերես...
 Բայց ինչ ոգուտ ես ամենից,
 Յերբ անցել եր բանը—բանից:

Ժանգ շղթայով Մուրճին կապած,
 Ծաղրանք ու ծեծ գլխին թափած,
 Բոբիկ, տկուր առաջ արին,
 Տարան տվին Հրեշ Յարին:

— Այդ դու յես հա...
 Այ սրիկա...
 Հակառակ ես դու իմ կամքին,
 Իմ որենքին...

Փոհ, փոհ...
 Հրես ենպես փչեմ,
 Փոհ, փոհ...
 Հրես ենպես ջնջեմ...

Ու «փոհ» արավ,
 Փոհ—փոհ շնչեց,
 Ենպես փչեց, ենպես փչեց,
 Վոր պատերը—որորվեցին,
 Մոտիկ կանգնած մարդ թե՛ գազան
 Ետ հողմիցը գլորվեցին.
 Մուրճը կանգնած,
 Անշարժ մնաց:
 Հրեշ—Յարը շատ կատաղեց.
 Ինչ ույժ ուներ նա հավաքեց՝
 Մին ել փչեց...
 Հողմ բարձրացավ, ալեկոծում,
 Մեծ փոթորիկ—մոտիկ ծովում.
 Յերկինք ծածկվեց փոշու ամպով.
 Քարավանն ել—վոր անցնում էր հեռու ճամբով՝
 Ավաղի մեջ թաղվեց, կորավ,
 Մարդիկ թռան ճնճղուկի պես, վորը հյուսիս, վորը հարավ:
 Բայց Մուրճն ելի կանգնած մնաց,
 Վոնց վոր մեխված...

— Դեռ կանգնած ես, սատանի ճուռ...
 Դե, տարեք շուտ,
 Բանտը տարեք,
 Դռանը մեծ կողպեկ դրեք,
 Տվեք հազար ծեծ ու տանջանք,
 Հազար ձևի նոր հարչարանք...

— Յար փողորմած...
 Տեսնում եմ, շատ ես բարկացած,
 Բայց թե՛ թող մի յես ել խոսեմ,
 Թող վոր պատմեմ, թույլ տուր ասեմ,

Թե ծառաներդ ինչ են անում,
Խեղճ մարդկերանց հոգին հանում,
Ուտում, լափում,
Արյուն թափում...

— Խոսում ե՞լ ես,
Լիրբ սևերես...
Ի՞նչ ե, ինձնից դու լսվ գիտես,
Թե վոնց պահես,
Թե վոնց շահես—
Յես իմ խախին:
Ձե՛ն բազմելու հո իմ գլխին...


Մտրակների հարվածի տակ,
Մուրճին բանտի խորքը տարան,
Պինդ կապեցին քիթ ու բերան,
Վոր չճշա՛, վոր չխոսի,
Մեռնի այնտեղ—առանց լույսի:

V

Խոնավ ու խավար բանտի անկյունում,
Ընկած եր Մուրճը— ու միտք եր անում—
Թե ինչու արդար բողոքի համար,
Տանջվում ե ինքը, տանջվում ե աշխարհ...
Ձեռ ու վոտն ամուր կապած, կապկապ՝
Խոնավ հատակին մնում եր ընկած...
Մինչ հրեշները անկուշտ, արնախում,
Մուրճ եյին լափում, կամ բռնում, կախում,
Յերկիրն ավերում, մատնում թալանի,
Վոր ել վո՛չ մի Մուրճ— ծպտուն չըհանի:
Շատ-շատ ծանոթներ Մուրճին ուրացան,
Անեծք ու հիշոցք թափեցին վրան,
Տառապանք ու մահ ցանկացան նրան:

Մուրճն ետպես ընկած՝
Մնաց ու մնաց...
Ու մի որ ել յերբ ժաժ եկավ տեղից՝
Ժանգ թափվեց կողից:

Մուրճը սարսափեց. կանգնեց զայրացած.
Ու մին ել հանկարծ՝
Միտք ծագեց գլխում, մի միտք լուսավոր,
Թե լավ ե մեռնել, մեռնել փառավոր,
Քան փտել բանտում, կեր դառնալ ժանգին,
Այսպես խայտառակ վերջ տալ իր կյանքին:
Փողոցի կողմի պատին մոտ գնաց,
Ու բարձր գոռաց. —



— Իմ ամուր գլխով—յեկել եմ քանդեմ.
Կամ քեզ կը քանդեմ, կամ յես կը մեռնեմ:
Յերկուսից մեկը—մահ, կամ ազատ կյանք.
Հերիք ե տանջանք...

Ասավ ու զարկեց,
Ենպես պինդ զարկեց,
Վոր մի զարկովը—պատը խորտակեց:

Բանտի նկուղից հենց վոր դուրս ելավ,
Ուշաթափ ընկավ:

Մի հսկա թռչուն-թռած մոտ յեկավ —
Թևերը փռեց,

Մուրճին պատվիրեց. —

Քանի դեռ ուշ չե, դե շուտ, շտապիր,

Վրաս պինդ նստիր,

Թռչեմ ու տանեմ քեզ հեռու, հեռու,

Դեպի գյուղերը, դեպի արա, առու...

Մի քիչ լավացիր,

Ու գործի անցիր:

Ինչ վոր ուշ ժ ուներ — Մուրճը հավաքեց,


Ու մեծ թռչունի մեջքին պինդ նստեց:

Բայց դեռ չեր անցել մի տասը վայրկյան,

Վոր մի գյուղի մոտ — կամաց ցած եկան:

— Կը մնաս այստեղ մինչև առավոտ,

Յեվ հետո կերթաս Մանգաղ ախպոր մոտ.



Միասին կանեք՝

Ինչ վոր դուք գիտեք:

Թե բան ե կամքիդ գնան հակառակ,

Իսկույն ինձ ձայն տուր, կանչիր «Սավառնակ».

Յես իսկույն կը գամ, քեզ կը թռցնեմ,

Քեզ կը փախցնեմ:

Դե, բարով մնաս.

Տես, Սավառնակին դու չմոռանաս...

Ասեց, թռավ,

Ոգում կորավ:

Առավոտը դեռ լույսը չբացված՝

Մուրճը — Մանգաղի խրճիթը գնաց:

VI

Լուսաբացին —

Մուրճի գալը — հենց լսեցին՝

Հավաքվեցին —

Ընկեր Կացին,



Քլունգը, Բահն ու դրացին,

Ել Գերանդի, Ուրագ, Յաքատ,

Սղոց, Ռանդա, Դուր ու Փետատ,

Յախավելը, Փոցի ու Յեղան,


Խոփ ու Ջևիչ, Թի ու Մղան,

Վոթ մեկն ասեմ... Հա — Մահակը,

Մին ել Ակը՝

Վոր ամեն բան կառնի տակը...

Հա պատմեցին ու պատմեցին,



Գանգատվեցին—

Աղաներից, Քյոխվից, Բեգից,
Թե ամեն ուր—լուսի ծեգից
Վոնց են թափվում նրանց գլխին,
Խանչում, տանջում անմեղ խալխին,
Ունեցածներն առնում, տանում,
Հափում թափում, քեֆ են անում,
Խեղճ մարդկերանց հոգին հանում..
Ու միասին—
Խորհուրդ արին գործի մասին.
Թե վոնց անեն,
Վոր ազատվեն—



Հրեշ—Յարից,
Ծառաներից,
Թե վոնց ջնջեն եղ լրբերին,
Վոր ցավ ու մահ նրանց բերին...
— Մենք աշխատենք, նրանք ուտեն,
Գլուխներս ել գան կտուտեն. .
Ով գրել է եսպես որենք,
Ա՛յ, կը բռնենք ու կը հորենք.
Յես կը դառնամ նրանց մահը—
Ասաց Բահը:

— Յես ել, յես ել.
Ճշաց տեղից մեծ Յախավել,
Ենպես սրբեմ զրանց ցեղը,
Ճանճ չըմնա—Յարի տեղը:

— Ընկել են մեր հալալ հացին.

Խոսեց—Կացին:

Կացին չըլի թող իմ անուն,

Թե յետ մնամ յես ջարդելում:

— Մի Մահակիս ականջ արեք.



Դուք ինձ մենակ գործի դրեք,
Տեսնեմ են վոնց գլուխ կըլի,
Վոր իմ զարկից տապակ չըլի...

— Հէյ, ջան. յես ձեր հոգուն մատաղ,
Գոչեց Մանգաղ.

Դե խումբ կազմենք, խումբ քաջարի,

Ձեզ պես քաջեր —ո՛վ կը ճարի...

— Գործ չի լինի մենակ մեզմով,
Մի Քլունգով, կամ Թե Ղազմով.
Պետք է վոր մենք շրջենք գյուղեր,
Կազմակերպենք ուրիշ ճյուղեր,
Ու մեծ ուժով դուրս գանք կռիվ,
Վոր չանեն մեզ ցաք ու ցրիվ:

Կազմ ու պատրաստ քաղաք ունենք,
 Կը միանանք, դեմ կը դնենք:
 Գյուղ ու քաղաք վոր միանա,
 Ել վոչ մի ծար—չի դիմանա...



Դուք մնացեք, հանգիստ, խաղաղ,
 Ճամբա կընկնենք յես ու Մանգաղ:
 Զգուշ կացեք, ասաց Մուրճը,
 Վոր ձեր շուրջը—
 Զպտավեն Գյոխվա, Գզիր,
 Կամ թե Բեգեր, լիրբ ու զազիր,
 Թե չե գործը տանուլ կը տանք,
 Իզուր կանցնի մեր աշխատանք:
 Դե, գնացեք հիմի գործի.
 Բայց թե ձեզնից մեկը փորձի
 Դավաճանել,

Մեր զաղտնիքը—Քյոխվին տանել...

— «Մահ լրտեսին».

Միաբերան այդպես ասին:

Մուրճ—Մանգաղի ճամբեն բարի,

Ցարի որը թող խավարի:

Հիմի անցնենք,

Հրեշ-Ցարից խաբար առնենք:



VII

Հենց վոր Ցարին

Իմաց արին,

Թե քանդելով

Իր ճակատով—

Բանտի պատը—հաստ ու ամուր,

Կորել ե Մուրճն անհետ, անլուր՝

Ցարի մարմնով անցավ սարսուռ:

— Ուր ել լինի,

Ինչ ել լինի,

Զորում պահված,

Ծառին թառած,

Սարի ծերին, թե քարի տակ,

Ընկած լինի ծովն անհատակ,

Թե ողի մեջ պտույտ դալիս,

Կամ մեռլատան—սուգ անելիս,

Հարսանիքում քեֆ անելիս,

Արթուն լինի, կամ թե քնած,

Առողջ լինի, հիվանդ ընկած՝

Կապեք, բերեք, ինձ հասցրեք,

Կամ այրեցեք, կրակեցեք,

Փռչին տվեք քամուն տանի

Հոտը կտրեք չար սատանի:

Թե վոր դատարկ ձեռով յետ գաք,

Զեզ եմ ասում—լավ իմանաք—

Կը կոտորեմ ամենքիդ ել՝

Ով կաք, չկաք—ահել, ջահել...

Փող փչեցին
 Ու կանչեցին
 Ծառաներին Յար-հրեշի,
 Վորոնք ընկած մարդկանց լեշին,
 Ատամները—արնակալած,
 Ամեն մինը գազան դառած,
 Մուրճ թշնամու յետքից ընկան,
 Ու ցրվելով—դարան մտան:
 Ել չթողին քաղաք ու գյուղ,
 Վոչ մի պալատ, և վոչ մի հյուղ,
 Ավերեցին ու քանդեցին,
 Անմեղ մարդկանց շահ տանջեցին,
 Բայց չգտան Մուրճին ահեղ,
 Յեւ վոչ մի տեղ:

Մուրճը չկար... Բայց արի տես,
 Վոր թափառող ամեն լրտես,
 Սարում, ձորում-շունչը փչում,
 Կուլ եր գնում, անհետ կորչում:
 Վոչ վոք դիտեր, թե մեր Մուրճը,
 Հավաքել է իրեն շուրջը—
 Հազար Մանգաղ, Քլունգ ու Բահ՝
 Վոր բերում են—հրեշին մահ:

Հրեշ-Յարի խավար յերկրում,
 Ծավալվում եր չտեսնված մի խլրտում:
 Եստեղ իշխան, հետեղ աղա, կամ հողատեր,
 Մի ուրիշ տեղ կոմս, ժանդարմներ, բեգ ու տերտեր,
 Կուլ են գնում, անհետ կորչում,
 Իրենց տանը, իրենց վորջում...

Ծառաներն ու Յարը դաժան,
 Վոր իրարից միշտ անբաժան
 Խավար յերկրի գլխին նստած,
 Ապրում էին միշտ հղիացած՝

Խորհուրդ արին— թե վոնց անեն,
 Վոր Մուրճ Մանգաղից ազատվեն:
 — Կռիվ, կռիվ ու կոտորած,
 Իմ վողջ յերկրում համատարած...

Գոչեց Յարը, առավ զենքեր,
 Շուրջ հավաքեց անթիվ զորքեր,
 Ու դուռ եկավ ավեր անի,
 Խառնակիչի հոգին հանի:

VIII

Ու դուրս եկան իրար դիմաց,
 Յերկու բանակ-խիստ զազազած:

Հրեշները—հրեշավոր, •

Աշխատանքն ու աշխատավոր:

Հրեշ—Յարը, վոնց վոր մի սար,
 Ծառաներն ել—վոնց վոր բլուր, վոնց վոր մեծ քար
 Վոր շարժվեցին...

Դաշտ ու սարերը ցնցեցին.

Ինչ ճամբով վոր անցնում էին,

Մորեխի պես հնձում էին:

Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,

Կործանեցին հազար գյուղեր, հազար քաղաք:

Մուրճի բանակին վոր հասան,

Նրանք տեսան՝

Թե վոնց աշխատանքի մասսան,

Կանգնել է գոռ ու անսասան:

— Մահ եմ բերում քեզ մահ զազիր,

Ինչքան կուգես դու զազազիր,

Այսոր կընկնես դու իմ ձեռից,

Վոր ազատվենք քեզ պես բեռից:

Ահեղագոչ Մուրճը գոչեց,

Ու քաջերին—կովի կոչեց:

— Բանակովդ քո լղրճուկ,
Դեմս ես յեկել, այ դու խղճուկ.
Հրես կըգամ՝
Փողի շինեմ, քամուն կըտամ...

Գոչեց Յարը,

Կասես ժայթքեց Գրգուռ սարը:

— Հա, հա, հա, հա... այ քեզ բանակ,
Սա կոխվ ե, թե խաղ, հանաք.
Դուրս են բերել մի գերանդի ու մի դանակ,
Մի Մուրճ, մի Բահ,
Հա, հա, հա, հա...

Եսպես ծաղրով ու ծանակով,
Կես ծիծաղով, կես հանաքով,
Հրեշները վրա նովին,
Վոնց վոր Փիղը—փոքրիկ լվին:
Բայց համարձակ մոտ յեկողին,
Տվին գլխին, տվին կողին,
Բաժին արին Սև—գրողին:

Վորի վոտը Մեխը ծակեց,
Մահակն ելավ գլուխ թակեց,
Գերանդին ել իրեն հանգին,
Վրա թռավ շատի գանգին,
Կարեց, գցեց վոտների տակ,
Կամ անդունդը—մութ, անհատակ:

Վորին գովեմ,

Վորին թողեմ...

Վորը հնձում, վորը քաղում,
Վորը մորթում, վորը—աղում,
Վորն ել բռնում—սաղ—սաղ թաղում...
Յարը տեսավ—ով վոր գնում՝
Կովի տեղից յետ չի դառնում.
Կարմիր ծով ե—գորբի տեղը,
Հա ջնջվում ե—Յարի ցեղը:

— Հիմի գնամ. վոր դեմ առ դեմ,
Մուրճի գորբին—ենպես ջարդեմ՝
Վոչ մի կովող սաղ չըմնա,
Վոր լիբբ Մուրճը—լավ իմանա—
Անհաղթ եմ յես...

Ահա եսպես՝

Լնգլնգալեն ճամբա ընկավ:

Յարը յեկվավ, յեկավ, յեկավ...

Յարի գորբը վողկորվեց,
Ու շատ ուժեղ գրոհ տվեց:
Մուրճի խուճբը դարձավ մի բոց,
Կովի դաշտն ել—վոնց վոր հոց:

— Դե, քեզ տեսեմ, Մուրճ իմ անգին,
Մի քու հանգին—
Ենպես զարկի Յարի գանգին,
Վոր տեղն ու տեղը շանսատակ,
Հրեշն ընկնի վոտներիդ տակ:

Գոչեց Մանգաղ, ու իր հերթին գործի անցավ:
Հենց ես եր վոր Մուրճն իմացավ.

Ջնգաց,

Թնդաց,

Ու ծղրտաց.—

— Ե՛յ, անպատկառ,
Հրեշ—դու Յար,
Վերջդ յեկավ, տեղտ պլնդ կաց,
Գալիս եմ ցած—
Հոգիդ հանեմ,
Քեզ դժոխքի բաժին անեմ...

Ու կայծակի նման ճայթեց,
 Յարի գլխին ենպես պայթեց,
 Վոր արյունը — յերկինք ցայտեց...
 Փովեց գետին Յար—հրեշը,
 Դաշտում մնաց հոտած լեշը...



— Յարը ընկավ, ընկավ, ընկավ...
 — Դե, շուտ փախեք, Մուրճը յեկավ...
 Յարի գորգից մնացածին,
 Մեր քաջերը—շուրջ պատեցին՝
 Ու ջարդեցին, ու ջնջեցին...

Մուրճ ու Մանգաղ իրար գրկած,
 Մեր յերկիրը — Յարից փրկած՝
 Կարմիր դրոշ են ձեռք առել,
 Կարմիր լույսի ջահ են վառել:
 Կեցցե մեր կյանքն, ազատ, խաղաղ,
 Կեցցե Մեր **ՄՈՒՐՃ**, Կեցցե **ՄԱՆԳԱՂ**:



Լ Ո Ւ Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

1. Մինիստրներ.—Կոմ. 1 գործ. (սակավաթիվ) գինը . . . 50 Լ.
2. Վլաստը, Կոմդեզը, Բոթոթը.—(Սակավաթիվ) գինը. . . 20 Լ.
3. Յարն ու Մուրճը.—Մանկական հեքյաթ, գինը. . . 50 Լ.

ՏՊԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Ն

1. Զարթոռող գյուղը. (պատմվածքների ժողովածու)
2. Վրճրտեղ ե... (նոր վեպ)
3. Հաղթանակ. պիես 3 գործ.
4. Այլ վեր ե, քան մահը. Կոմ. 3 գործ.
5. Առակներ
6. Մանկական պատմվածքներ

145

0014301

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0014301

